# ԸՆԿԵՐԻՍ

*Սիրելի ընկեր, ա՛խ սրտիս հատոր*
*Ինչո՞ւ է տանջում քո սիրտը անդորր*
*Ինչո՞ւ դառն արցունք հեղեղի նման*
*Ողողում են քո այտերդ աննման:*

*Քո զուարթ դէմքը այսօր տեսնում եմ*
*Մռայլով պատած, սեւ թախիծ տիրած.*
*Քո վառ հայեացքում ես նկատում եմ*
*Յուսահատութիւն, հառաչանք ու լաց։*

*Միթէ հենց կեանքի առաջի՛ն քայլից*
*Յուսահատութիւնը տիրեց քո սրտին.*
*Միթէ չի՞ սպասում այս լայն աշխարհից*
*Գութ, կարեկցութիւն քո անմեղ հոգին:*

*Երբ ամենքը այս փշոտ կեանքից*
*Կտրեն յոյսերը, սառչեն իդէալից.*
*Էլ ո՞վ կը մնայ ընդդէմ չարութեան*
*Ընդմիշտ կռուելով դառնալ ախոյեան։*

*Ո՛չ, իմ սիրելիս, դու մի վհատիր,*
*Եռանդուն կերպով քո գործին դիմիր.*
*Ընդմիշտ ունեցիր սուրբ նշանաբան*
*Կռուել, մաքառել ընդդէմ չարութեան:*

Տ. ՇՈՒԼՈՒԽԵԱՆՑ